

աղգերը՝ կը գտնուին իրենց սեփական դրախտին մէջ: Մարդուս ոտքը պէտք է ըլլայ իր հողին վրայ: Հիմա մենք, դժբախտաբար, դուրս ենք նետուած կեանքի շրջագիծէն: Նախ ներս մտնենք, բաբախենք կեանքի ընդհանուր կշռոյթին մէջ ու վերջը կանչենք մարդը որ արդէն պիտի գայ, առանց մեր հրաւերին, լսելով ժողովուրդին հոգեկան կանչը եւ հողին աղաղակը:

Քանի մը տող վարը դրած էր եղբայրը.

— Աշխատութիւնը չերազեր, այլ կ'իրականացնէ: Անգործութիւնն է որ կ'երազէ: Հայրենիքէն դուրս գտնուողը գրեթէ անգործ մըն է: Հայրենիքն է մեծ աշխատանոցը: Մտի՛ր աշխատանոց:

Հայկազ ինկաւ տետրին վրայ: Տեսնողը պիտի կարծէր որ կը քնանայ: Բաւական պտեն մնաց այդ վիճակին մէջ: Ուղիք ելաւ երբ մօտակայ եկեղեցիին զանգակը կը հնչէր.

— Տա՛նկ, տա՛նկ տա՛նկ...

Մեռել կար:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՍԱՇԼԵԱՆ

×

Գնա՛, իմ խեղճ գիրք, գնա մարդամէջ.
Գլուխդ քաշ գցի՛ր, մի՛ մեղաճար հեջ:
Ակամջդ փակի՛ր, սիրտդ լէճ բռնիք,
Խնչ ասեմ, խօսիմ, տա՛ր ու համբերի՛ր:

Ճամփաքթի գլխին շատ փորձամբ կգայ:
Անձրեւ, ձիւ, կարկուտ, հազիր համեշա:
Դումամ ու կայծակ, շո՛ք, բու՛ք ու կրակ
Ամէն տեղ կըլին, ամէն ժամանակ:

Էսպէս բանիցը ով շուտ վախեմայ,
Ու մամփի կիսիցն վեր կեմայ, յետ գայ,
Ոչիմչ չի շահվիլ, դարտակ կմնայ.
Փորձամբից մարդը՝ լաւ չի՝ մեղաճայ:

Աշխարհի բերանն ջվալի բերան:
Առակ է ասած՝ ո՞ւմ ասես քո բանն:
Հալքաք մէկ-օր էլ արեւ դուրս կգայ,
Էմ վախտ կ'իմանամ, քէ ուզածդ ի՞նչ ա:

Խ. ԱՌՈՎԵԱՆ